

---

ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ. «Յոթ օր, յոթ գիշեր». հայոց հարսանիքի համապատկեր, Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 616 էջ+32 էջ գունավոր ներդիր:

Հայկական ավանդական հարսանեկան ծեսի տեղային դրսևորումների մասին մինչ օրս, իհարկե, բավական տեղեկություն ունեինք. առանձին շրջանների հարսանեկան ծիսաշարերի նկարագրությունները սփռված էին «Ազգագրական հանդես»-ի էջերում, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի հատորներում և այլուր, ուր քիչ թե շատ անդրադարձ էր կատարվում հայ ժողովրդի ծիսատոնական կյանքին, ունեինք աղձնիքահայերի ամուսնաընտանեկան սովորույթներին ու ծեսերին նվիրված ամբողջական ուսումնասիրություն (Ռ.Նահապետյան, Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, Երևան, 2007), հարսանեկան տարբեր սովորույթների քննությանը նվիրված առանձին հոդվածներ: Սակայն ծիսաշարի համահայկական պատկերն ամբողջացնող, համակարգի բերող գիտական ուսումնասիրություն դեռևս կատարված չէր, և դրա պահանջը վաղուց արդեն հասունացել էր: Եվ ահա, վերջերս լույս տեսած՝ ազգագրագետ Գայանե Շագոյանի «Յոթ օր, յոթ գիշեր». հայոց հարսանիքի համապատկեր» մենագրությունը գալիս է լրացնելու հայ ազգագրության մեջ եղած այս բացը: Գիրքը տպագրության է երաշխավորել ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդը, պատասխանատու խմբագիրն է ազգագրագետ Հրանուշ Խառատյանը:

Հայկական ավանդական հարսանիքի մասին հնագույն վկայությունները, տպագիր աղբյուրներից ու արխիվային նյութերից քաղված հարյուրավոր փաստերը համադրելով արդի հարսանեկան սովորույթներին, հատկապես՝ անձնական մեծաքանակ դաշտային գրառումներին՝ հեղինակը ոչ միայն ստանում է հայկական հարսանեկան ծիսաշարի հնարավոր ամբողջական պատկերը՝ բնորոշ մանրամասներով, այլև ցույց է տալիս զարգացման և փոխակերպման օրինակավորությունները: Այս համատեքստում, ի-

հարկե, նախ և առաջ կարևորվում է ավանդական նյութի արծարծումը՝ այն կենդանի պահպանելու ակնկալիքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիրքը նախատեսվում է բավական լայն ընթերցող շրջանակի համար՝ հեղինակը նյութի մատուցման յուրօրինակ սկզբունք է մշակել: Հարսանեկան ծեսի բուն նկարագրությունը, որը նախատեսվում է և՛ գիտական, և՛ հանրամատչելի ընթերցանության համար, տպագրված է սովորական՝ ուղիղ տառատեսակով, իսկ գիտական նեղ հարցեր շոշափող՝ ծեսի այս կամ այն երևույթի առաջացման պատմության, պատմաառասպելական արմատների, փոխակերպման յուրահատկությունների և այլ հարցերի ուսումնասիրմանը նվիրված հատվածները տպագրված են շեղատառ: Ընդ որում, նկարագրական հատվածներում ևս ընդգծված տարբերվում են բերվող բնագրային մեջբերումները, որոնք տրվում են խորքային պարբերություններով: Տեքստի մատուցման այս կերպը բավական շահավետ է նման հարուստ ու բազմապլան նյութի մատուցման տեսակետից: Որպես հանրամատչելի ընթերցանության գիրք՝ մենագրությունը կարող է գործուն դեր կատարել հայկական հարսանեկան գեղեցիկ ավանդույթների պահպանման և, ինչու ոչ, վերականգնման հարցում: Որպես գիտական ուսումնասիրություն՝ այն նոր ու ամբողջական խոսք է՝ ծեսի՝ համահայկական պատկերն ամբողջացնող, հարսանեկան ծիսակարգի գիտական ամենատարբեր խնդիրներ քննող:

Ուսումնասիրության մեջ Գ. Շագոյանը ցրում է քարացած պատկերացումներն այն մասին, թե ինչ-որ ժամանակ գոյություն է ունեցել «իդեալական, մաքուր հայկական հարսանիք», որը ժամանակի ընթացքում աղարտվել է: Ըստ հեղինակի՝ ժողովուրդների

պատմությունը շատ նման է մարդու կենսագրությանը, որը բնականոն զարգացում է ապրում, և դժվար է այդ զարգացման ընթացքի մեջ մի իդեալական փուլ առանձնացնելը: Նույնպես և անհմաստ է հայոց հարսանիքի տեղային բազմազանությունների մեջ ամենաազգային ու հայկական տարբերակի որոնումը (էջ 13): Թեպետ, ինչպես ցույց է տալիս հետագա ուսումնասիրությունը, դրսևորումների այսպիսի բազմազանությունը որոշակի համահարթեցման և «ազգայնացման» է ենթարկվում սկսած խորհրդային տարիներից՝ խորհրդային ազգերի հարսանեկան ծիսաշարերի նույնականացման նպատակով, և աստիճանաբար սկսում է կորցնել իր տեղային առանձնահատկությունները, կորուստ, որը շարունակվում է նաև ետխորհրդային տարիներին: Բարձր գնահատելով տեղային այդպիսի դրսևորումները՝ որպես ժողովրդի ոչ նյութական մշակույթի ուշագրավ արտահայտություններ, Գ. Շագոյանը դրանք համեմատում է բարբառների հետ, որոնց գոյությունը համ ու հոտ է պարզևում գրական տեքստին, և անպայմանորեն կարևորում է դրանց պահպանման հարցը: Այդ է պատճառը, որ նախընտրելով նյութի մատուցման միասնական սկզբունքը՝ ծիսաշարի ողնաշարի վերականգնությամբ, հեղինակը յուրաքանչյուր ծեսի դեպքում հիշատակում է հասանելի աղբյուրներից քաղված տեղային բոլոր առանձնահատկությունները:

Գրքում հարսանեկան ծեսն ուսումնասիրվում ու ներկայացվում է ըստ փուլերի հաջորդականության: Չորս հիմնական մասերից առաջինում հեղինակն անդրադառնում է ամուսնացողների տարիքային հարցերին, իսկ հերթական երեք գլուխներում քննում բուն հարսանեկան ծեսերը՝ սկսած մինչհարսանեկան ծեսերից (աղջիկտես, խնամախոսություն, խոսքկապ, նշանադրություն, հարսնատես, հղե կտրել, շորձևեք, հարսնտրների ընտրություն, հրավեր), այնուհետև՝ բուն հարսանեկան ծիսակատարությունները (այլուրմաղեք ու գաթաթուխ, գինեթափեք, հալավօրհնեք, ծառ կապել, ազ-

բանստում, ննջեցյալների օրհնություն, հինադրեք, փեսաբաղնիք, եզմորթեք, հարս պտտեցնել, հարսի բաղնիք, փեսաթրաշ, փեսա հագցնել, քավորի հետևից գնալ, հարսնառ, աղվեսի այցելություններ, հարս հագցնել, հարսի տան հարսանեկան խնջույք, ամուսնական պաշտոնական գրանցում, սրբազան կենտրոնների այցելություններ, փեսայի բերանբացեք, հարսի հրաժեշտ, դուռ բռնել, խնամապաշ, ճանապարհ փակել, հարսի օժիտի տեղափոխում, սեղան դուրս հանել, կոխ, շեմի ծեսեր, մատաղ շեմին, օջախ բարևել, հարս նստեցնել, հարսանեկան խնջույք, նվիրատվություն, տարոսը փոխանցելու ծես, օժիտ բացելը, հարսի պարը, մոմերով կամ վերջին պարը, հավթոնեք, փեսադատ, խաշի օր, թագվերաց, առագաստի ծեսեր, կարմիր խնձոր) և վերջապես հարսանիքին հաջորդող ծիսական արարողությունները (ոտնվա, գլուխ լվանալ, խնամականչ, քառասունք, դարձ, քավորի պատասխան, տոնական փայեր):

Գրքի վերջում տեղ են գտել անգլերեն լեզվով ամփոփում, համառոտագրությունների, գրականության ու նկարների ցանկերը, ինչպես նաև առարկայական ցանկին փոխարինող մի «Հավելված», ուր հերթականությամբ ներկայացվում են հարսանեկան ծեսերը՝ իրենց համառոտ բնութագրերով: Գիրքը եզրափակում է 32 էջից բաղկացած գունավոր նկարներով ներդիրը:

Գրքում ընդգրկված հարցերի շրջանակը բավական լայն է. բացի բուն ծեսերի նկարագրությունը՝ հեղինակը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտաբար կանգ է առնում բազմաթիվ հարակից հանգամանքների վրա, ինչպիսիք են հարսի և փեսայի հագուստի մանրամասն նկարագրերը. ասենք, մերօրյա ընթերցողին կարող է զարմանք պատճառել այն փաստը, որ հնում հարսի զգեստն ամենևին էլ ձերմակ չի եղել, այլ կանաչ, կարմիր, իսկ այլ ժողովուրդների մոտ կարող էր հանդիպել նույնիսկ սևը: Հեղինակը մանրամասն կանգ է առնում հարսանեկան հրավեր-բացիկների, հարսան-

քատան, հարսանեկան տորթի ձևավորման նկարագրության վրա՝ յուրաքանչյուր թվացյալ մանրուքի մեջ նկատելով և ցույց տալով ծեսի էությունն արտահայտող խորհրդանշանային բազմաթիվ դրսևորումներ: Այս ամենն ավելի տեսանելի ու համոզիչ են դարձնում գրքի էջերում առատորեն տեղ գտած լուսանկարները՝ տարբեր ժամանակաշրջանների և տարբեր տեղավայրերի հարսանեկան ծեսերի բազմապիսի պատկերներով: Քննվում են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ, տարվա մեջ հարսանիքը կատարելու համար նախընտրելի ժամանակը, հարսանեկան ծեսերի ընթացքում տրվող նվերների բնույթը, նշանադրության խափանման ժամանակ գործող նորմերը և այլն:

Հարսանեկան ծեսի ազգագրական նկարագիրը հարուստ և ամբողջական է դառնում բանահյուսական նյութի արծարծմամբ: Առած-ասացվածների, օրհնանք-բարեմաղթանքների, ծիսերգերի մեջբերումները լիակատար են դարձնում ծեսի նկարագիրը՝ այն չկտրելով իր խոսքային դրսևորումներից: Մասնավորապես, որոշ պարագաներում հենց ծեսի խոսքային-բանահյուսական արտահայտությունների վերլուծությունն է օգնում այս կամ այն երևույթի մեկնաբանմանը, ինչպես, օրինակ, դա տեսնում ենք «Արարչագործության առասպելը փեսայի ծիսական տեքստում» բաժնում:

Գրքի տարբեր հատվածներում Գ. Շագոյանը նոր և ուշագրավ դիտարկումներ է կատարում: Այսպես, օրինակ, հարսանեկան ծեսը քննելով իր փոխակերպումների մեջ՝ հեղինակն առանձնացնում է մինչխորհրդային, խորհրդային և էտ-խորհրդային փուլեր: Եթե մինչխորհրդային հարսանեկան ծեսերում ավելի մեծ տեղ է զբաղեցնում փեսայի կերպարը՝ պտղաբերության, աշխարհաստեղծման խորհրդանիշներով, ապա խորհրդային հարսանիքում նորապսակները «կարճատև հավասարություն» են ձեռք բերում, և առաջ է մղվում ընտանիքի, ռոմանտիկ սիրո գաղափարը: Ետխորհրդային հարսանիքում ակնհայտորեն գերակայում է

հարսի կերպարը. նույնիսկ հարսանեկան չեզոք պարագաները ստանում են հարսի հետ առնչվող ձևավորում՝ հիմնականում սպիտակ և վարդագույն (էջ 16):

Որոշակի օրինաչափություններ են նկատվում արնելահայ և արևմտահայ հարսանեկան ծիսակարգերի միջև, որոնցից առաջինը, ըստ հեղինակի, նմանություն ունի կովկասյան ժողովուրդների հարսանեկան ծեսերի հետ, իսկ երկրորդում շատ են առաջավորասիական ծիսական տարրերը (էջ 21):

Ավանդական և ժամանակակից հարսանիքների համեմատությունները, իհարկե, ի հայտ են բերում զգալի տարբերություններ: Ժամանակակից հարսանիքի եվրոպականացումը, որը հետևանք է արդի գլոբալացման և միջազգային շուկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների ու հատկապես համացանցի միջոցներով տարբեր մշակույթների համահարթեցման գործընթացների, արդի հարսանիքը բավական հեռացրել է ավանդականից՝ ներմուծելով նոր սովորույթներ ու ծեսեր: Նոր ծեսերի հիմքում, այնուամենայնիվ, հաճախ հայտնաբերվում են հնագույն ծեսերի խորհուրդն ու իմաստաբանությունը:

Ճիշտ այսպիսի իմաստային նույնություն է Գ. Շագոյանը տեսնում եզմորթեք ավանդական ծեսի և մերօրյա՝ Եվրոպայից ներթափանցած տորթ կտրելու ծիսական արարողության միջև՝ խորքում տեսնելով նույն իմաստաբանությունը՝ հանրությունը և տիեզերքը մոդելավորող: Ըստ այդմ, և ցույց, և՛ տորթը ներկայացնում են այն ամբողջը, որը, բաժանվելով հարսանիքի մասնակիցների միջև, միացնում է նրանց (էջ 235):

Ծեսի որոշ փոխակերպումներ էլ պայմանավորված են կենցաղային պայմանների փոփոխություններով. ասենք, եթե հնում փեսայի և հարսի լողացնելը մի ողջ արարողություն էր՝ իր յուրահատուկ խորհրդով, և այս արարողության կայացմանը նպաստում էր հասարակական բաղնիքների գոյությունը, որը խմբային բնույթ էր հաղորդում ծեսին, ապա այժմ հարսանիքից առաջ լողանալը, կորցնե-

լով իր ավանդական իմաստաբանությունը, վերածվել է ամենօրյա հիգիենիկ մի գործողության (էջ 254):

Ավանդական հարսանիքի մասին խոսելիս, իհարկե, անհնար է կանգ չառնել թագավոր-փեսայի և կենաց ծառի ուսումնասիրության վրա, որոնց շուրջ է ծավալվել ավանդական հարսանիքի ամբողջ ծիսաշարը: «Հարսանիքում փեսան գլխավոր հերոս է, թագավոր, որը կերպարանավորում է առասպելական առաջին մարդուն՝ իբրև տիեզերքի մի մանրակերտի: Իբրև մակրոկոսմի խորհրդանիշ՝ հանդես է գալիս փեսայի «տիեզերական ծառը» (էջ 286): Հետևաբար, բնական է, որ թագավոր գովելիս պարտադիր է ծառի թեման, իսկ ծառ զարդարելիս հիշատակ-

վում են փեսայի հանդերձանքի մասերը: Ըստ էության, երկուսն էլ տիեզերական հարացույցներ (մոդելներ) են, աշխարհը խորհրդանշող տարբեր կերպարներ՝ աստվածաշնչյան, եկեղեցական և լայն առումով՝ տիեզերական իմաստաբանությամբ (էջ 286–287):

Ուսումնասիրության տարբեր էջերում առատորեն տեղ գտած այս և բազում այլ դիտարկումները շատ ավելի են մեծացնում գրքի արժեքը՝ այն զուտ հարսանեկան ծիսական համալիրի վերակազմումից վերածելով գիտական մի ծանրակշիռ ուսումնասիրության՝ ձեռք առաջացումը, էությունը, տրամաբանությունը և զարգացման բնականոն օրինաչափությունները

բացահայտող:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ